Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«_23___»_հոկտեմբերի_____2018 թ. թիվ __32_ նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

_____ Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ՕՏԱՐ ԼԵՋՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ ՕՏԱՐ ԼԵՋՈՒՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(Նոր խմբագրությամբ)

Երևան 2018թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի Օտար լեզուների ամբիոնի Օտար լեզուների և միջմշակութային հաղորդակցության ակումբը (այսուհետև՝ Ակումբ) ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետև՝ ԳԿՄԿ) կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԳԿՄԿ-ի և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.2. Ակումբը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ՝ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ:

1.3. Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ՝ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ:

2. ԱԿՈՒՄԲԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Ակումբի նպատակներն են.

- Ուսումնական գործընթացում ցուցաբերել անհատական մոտեցում, որը թույլ կտա բացահայտել յուրաքանչյուր ուսանողի լեզվական գիտելիքի մակարդակը և օգնել համեմատաբար ցածր լեզվական մակարդակ ունեցող ուսանողներին հաղթահարել դժվարությունները և լիարժեք ընդգրկվել ուսումնական գործընթացում:
- հաղորդել մասնագիտական օտար լեզվի հուսալի գիտելիքներ ու հմտություններ,
- ապահովել բոլոր անհրաժեշտ նախապայմանները, որոնք կնպաստեն անգլիական կամ այլ մշակույթ փոխանցելուն, ուսանողների խոսքի մշակույթը կատարելագործելուն և միջմշակութային հարաբերություններ ապահովելուն:
- Ակումբը գործում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ օտար լեզուների ամբիոնի կազմում, որտեղ տարբեր մասնագիտությունների ուսանողների համար դասավանդում են հիմնականում անգլերեն՝ որպես մասնագիտական օտար լեզու: Անգլերենից զատ որպես այլընտրանքային օտար լեզու դասավանդում են նաև ֆրանսերեն,

գերմաներեն, ռուսերեն, արաբերեն, թուրքերեն և այլ լեզուներ, ուստի Օտար լեզուների և միջմշակութային հաղորդակցության ակումբում ևս՝ որպես այլընտրանքային լեզուներ կարող են մեկնարկել դասընթացներ վերոնշյալ բոլոր լեզուներով:

2.2. **Ակումբի խնդիրներն են.**

- Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողներին, ինչպես նաև օտար լեզու սովորել ցանկացողներին ապահովել հաղորդակցման համար անհրաժեշտ գործիքակազմով,
- Միջմշակութային հաղորդակցություն ապահովելու նպատակով ստեղծել բազմամակարդակ դասընթացներ, որոնք կապահովեն յուրաքանչյուր օտար լեզվի անբռնազբոս փոխանցումը ակումբային մթնոլորտում,
- առաջարկել նրանց դասավանդման արդիական ձևեր, հետաքրքիր դասընթացներ և անհատական ուսուցումը խթանող միջոցներ (լեզվական նյութի սահմաններում ընթերցած կամ ունկնդրած տեքստերը հասկանալու նպատակով)
- Ընդգրկել խոսքային գործունեության բոլոր 4 հմտությունները՝ լսել/ունկնդրել, խոսել, կարդալ/ընթերցել, գրել:
- օտարերկրյա նույնանման կառույցների հետ լավագույն փորձի փոխանակման շրջանակներում փոխհարաբերություններ հաստատել, ամրապնդել և զարգացնել դրանք
- անհրաժեշտության դեպքում կազմակերպել սեմինարներ, քննարկումներ լեզվի՝ նորարական մեթոդներով դասավանդում ապահովելու համար

3. ԱԿՈՒՄԲԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1. Ակումբի աշխատանքերի համակարգումն իրականացնում է ԳԿՄԿ օտար լեզուների ամբիոնի վարիչը:

3.2. Ակումբի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է Ակումբի համակարգողը(կամ ամբիոնի վարիչը), ում աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է ԳԿՄԿ տնօրենը:

3.3. Ակումբի համակարգողը.

ա) հետևում է Ակումբի մասնագիտական և ֆինանսական գործունեության կատարմանը,

բ) կազմակերպում և ղեկավարում է Ակումբի ընթացիկ ախատանքները,

գ) վերահսկում է Ակումբի բաժինների (դրանց առկայության պայրագայում) աշխատանքները,

դ) ԳԿՄԿ տնօրենին առաջարկություն է ներկայացնում Ակումբի աշխատողներին օրենքով սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ,

ե) իր բացակայության ժամանակ առաջարկություն է ներկայացնում համակարգողի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվելու վերաբերյալ,

զ) պատշաճ կարգով կազմակերպում է Ակումբում տարվող գործավարությունը:

3.5. Ակումբում կարող են դասավանդել, ինչպես Օտար լեզուների ամբիոնի մշտական, այնպես էլ ժամավճարային սկզբունքով հրավիրված դասախոսներ, որի հաստիքացուցակը ամբիոնի վարիչի միջնորդությամբ սահմանում է ԳԿՄԿ տնօրենը: